Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 420 - Ա
որոշման

«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՁՐԱՆՑՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում ոռոգման համակարգի բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել «Սպանդարյան»-ի ջրանցքի ՆԿ58+00-ՆԿ109+39 հատվածի վերակառուցման շինարարական աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի, Սիսիան համայնք, ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	416,052,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հուլիսի 17-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է վերակառուցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյան»-ի ջրանցքի ՆԿ58+00-ՆԿ109+39 հատվածը: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հուլիսի 17-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 409,500,000 դրամի չափով. 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյանի» ջրանցքի ՆԿ58+00-ՆԿ109+39 հատվածի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հուլիսի 17-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 4,095,000 դրամի չափով. 3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյանի» ջրանցքի ՆԿ58+00-ՆԿ109+39 հատվածի վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հուլիսի 17-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատ-վածում՝ 2,457,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) նախատեսվում է իրականացնել «Սպանդարյան»-ի ջրանցքի ՆԿ58+00-ՆԿ109+39 հատվածի հողային, բետոնային աշխատանքներ, շինարարական կարերի մշակում, ջրթողների իրականացում, ջրատարի վրայի կամուրջների նորոգում և վթարային ջրթողների կառուցման աշխատանքների իրականացում՝ 409,500,000 դրամի չափով. 2) շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 4,095,000 դրամի չափով. 3) շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 2,457,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ